ՀՈՐԲԱՏԵՂ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արթուր Քարամյան
Հեռախոս՝ +374. 93.004916
Բնակչություն՝ 283

Համայնքի վարչական տարածքը համապատասխանում է Հորբատեղ գյուղին: Այն գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի շրջանում՝ Եղեգնաձոր-Սելիմ մայրուղու հյուսիս-արևելյան մասում: Հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից 23 կմ է, հանրապետական նշանակության ճանապարհից՝ 12 կմ: Համայնքը սահմանակից է Արտաբույնքի, Շատինի, Եղեգիսի, Սալլիի գյուղական համայնքներին: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1850մ բարձրության վրա:
Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային և երաշտի տարիները: Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին: Համայնքի տարածքում գտնվող Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին 11-րդ դարի կառույց է: Տարածքում կան նաև խաչքրեր:
Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:
Արոտավայրերը զբաղեցնում են 1136.8 հա տարածք, վարելահողերը՝ 6.9 հա, խոտհարքերը՝ 197 հա: Գյուղում գործում է հիմնական դպրոց, բուժկետ, կապի հանգույց: